ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արզել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«15» ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 27
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 16-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արզել համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 15-ի հերթական թիվ 6 նիստի օրակարգը

1. Նվիրաբերված գույքն ընդունելու մասին
2. Արզել համայնքի տարածքում գտնվող, սակայն որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 0,022 հա մակերեսով հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին
3. Արզել համայնքի տարածքում գտնվող, սակայն որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 0.12605 հա մակերեսով հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին
4.Արզել համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատարածքը, մրցութային կարգով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԽԵՅԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«15» ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 28

## ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 –րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետերի, հիմք ընդունելով <<ԱԿՎԱՄԱՐԻՆ >> ՍՊԸ-ի հիմնադրի 2020 թվականի ապրիլի 29-ի թիվ 1 որոշումը

**համայնքի ավագանին որոշում է**

1.Ընդունել ԱԿՎԱՄԱՐԻՆ ՍՊԸ-ի կողմից Արգելի համայնքապետարանին նվիրաբերված Արգել համայնքի վարչական տարածքում գտնվող 0.45617 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը, որի կադաստրային արժեքը կազմում է 111762 /մեկ հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր վաթսուներկու / դրամ:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արգելի համայնքապետարանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«15» ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 29

## ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱԿԱՅՆ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՌՎԱԾ 0.0220 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2020 թվականի մայիսի 8-ի N Կ-08052020-07-2019 որոշումը

համայնքի ավագանին որոշում է

1. Արգել համայնքի տարածքում 22-րդ փողոց 5-րդ փակուղի թիվ 1/1 հասցեում գտնվող, սակայն անձշտությամբ «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 0.0220 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, հողակադաստրային ծածկագիր 07-014-0053-0054-ից, ճանաչել որպես Արգել համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru


# ՈՐՈՇՈՒՄ

«15» ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 30

### ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱԿԱՅՆ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՌՎԱԾ 0.12605 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2020 թվականի մայիսի 18-ի N Կ-18052020-07-0025 որոշումը

համայնքի ավագանին որոշում է

1. Արգել համայնքի տարածքում գտնվող, սակայն անձշտությամբ «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 0.12605հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը , հողակադաստրային ծածկագիր 07-014-0209-0045-ից, ճանաչել որպես Արգել համայնքի սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## «15» ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 31

## ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ , ԱՌԱՆՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ,ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

համայնքի ավագանին որոշում է

1.Թույլատրել Արգել համայնքի վարչական տարածքում 20-րդ փողոց 6-րդ նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող , համայնքային սեփականություն հանդիսացող / սեփականության վկայական թիվ 12022020-07-0098, գաղտնաբառ A9B7WIQBBAMG / բնակավայրերի նպատակային նշանակության 0.14 հա մակերեսով այլ հողամասը / հողակադաստրային ծածկագիր 07-014-0123-0021/, 50 տարի ժամկետով, առանց կառուցապատման իրավունքի, մրցութային կարգով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել ՝ վարձավճարի մեկնարկային չափ սահմանելով 41160 (քառասունմեկ հազար հարյուր վաթսուն ) դրամը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ